



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիոյան
« 25 » 02 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0013-22

Ձեռնարկողը՝

«Լեռ և ջուր» ՍՊԸ

Լոռու մարզ, գ. Շիրակամուր, Կրասնոդարի 56

Գործունեությունը՝ «Չիչխան» փհէկի վերազինման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Խ. Մարտիրոսյան

Համաձայն նախկին նախագծի «Չիչխան» փհէկի ջրաէներգետիկ ցուցանիշները եղել են.

- Դրվածքային հզորություն՝ 605կվտ
- Ստատիկ ճնշում՝ 96.7մ
- հաշվարկային ելք՝ 0.8խմ/վրկ
- հաշվարկային ճնշում՝ 95.2մ
- վերին բիեֆում հաշվարկային նիշը՝ 1595.4մ:
- ներքին բիեֆում հաշվարկային նիշը՝ 1498.70մ

Նշված ցուցանիշներով «Չիչխան» փհէկի կառուցման համար «Լեռ և ջուր» ՍՊ ընկերությանը 2006 թվականի հուլիսի 25-ին Բնապահպանության նախարարության կողմից տրվել է ԲՓ-80 շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական փորձաքննական եզրակացություն: Ընկերությանը շրջակա միջավայրի նախարարության կողմից տրված ջրօգտագործման թույլտվությունում /թիվ 02 10-2 տրվ. 25.05.2021թ, որը տրվել է ճշտված նիշերով/ ջրառի /H=1740.0մ/ և ջրահեռացման /H=1640.0մ/ նիշերը տարբերվում են և չեն համապատասխանում «Չիչխան» փհէկի կառուցման նախկին նախագծով և փորձաքննական եզրակացությամբ տրված ջրառի և ջրահեռացման կետերին /ջրառի նիշը՝ 1595.4մ, ջրահեռացման նիշը՝ 1498.70մ/: Նշված ցուցանիշների առկա անհամապատասխանությունը շտկելու և վերազինման նպատակով նախատեսվող աշխատանքներն իրականացնելու համար Ընկերությունը մտադիր է ստանալ շրջակա միջավայրի վրա ազդեցության նոր փորձաքննական եզրակացություն:

Նախկինում Ընկերության կողմից վերանայվել է ՓՀԷԿ-ի կողմից օգտագործվող հաշվարկային ելքի քանակը և բնապահպանական ելքի չափաքանակը /հաշվարկային ելքը կազմում է առավելագույնը՝ 1.3 խմ/վրկ /վարարաջրերի ժամանակ ապրիլ-հունիս ամիսներ/, իսկ բնապահպանական ելքը՝ Շիչխան գետի համար ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան հաշվարկվել է ըստ ամիսների և նվազագույնը կազմում է 0.20խմ/վրկ-հունվար ամիս/, իսկ առավելագույնը՝ 0.96խմ/վրկ-ապրիլ ամիս/: Նշված չափաքանակները սահմանված են Զրօգտագործման թույլտվությամբ: Հաշվարկային ելքն ապահովելու համար Ընկերության կողմից «Չիչխան» փհէկի նախկին նախագծով վերակառուցվել է Չիչխան գետի Նալբանդ ոռոգման ջրանցքի վրա գոյություն ունեցող ջրընդունիչ կառուցվածքը, կառուցվել է դերիվացիոն պողպատե խողովակաշար՝ 800մմ տրամագծի, 365մ երկարությամբ:

Ընկերության կողմից վերազինման նպատակով նախատեսվում է ՀԷԿ-ի շենքում տեղադրել ժամանակակից ցուցանիշներով 600 կվտ հզորությամբ տուրբինային ագրեգատ՝ իր էլեկտրական միացումներով և վերակառուցել ու հիմնանորոգել ՀԷԿ-ի կողմից օգտագործվող ջրի հեռացման համակարգը, որի արդյունքում կկրճատվի Չիչխան գետ հեռացվող ջրի կորուստները: «Չիչխան» փհէկի շենքում գործող և տեղակայվելիք հիդրոագրեգատներն ունեն ավտոմատ կարգավորման և ղեկավարման համակարգ: Տեղադրվող տուրբինային ագրեգատը կազմված է՝

- Հիդրոտուրբին N3, մակնիշը՝ ՇՇ100-47-65, արտադրության տարին՝ 2011
- Աշխատանքային անիվի վրա առավելագույն ստատիկ լարումը՝ 170 մպա,
- սահմանափակման աստիճանը՝ ոչ ավել քան + 10,0 մպա:
- Գեներատոր N3, մակնիշը՝ АГ 600.400.50.S.10
- պտույտների թիվը՝ 600 պտ/րոպե
- տեսակը՝ հորիզոնական
- արդյունավետությունը՝ ոչ պակաս քան 95%:



Հայտում ներկայացվել է ՓՀԷԿ-ի վերազինման աշխատանքների և շահագործման փուլի համար շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների նվազեցմանը և աշխատանքի անվտանգությանն ուղղված միջոցառումների ծրագիր, որը ներառում է հետևյալները.

- շինարարության ժամանակ բետոնային աշխատանքները կատարել հաշվի առնելով պաշտպանիչ տեխնոլոգիաների և նյութերի օգտագործումը;
 - օգտագործված քայուղերը և տրանսֆորմատորային յուղերը հավաքել և պահել հատուկ տարաներում և հանձնել լիցենզիա ունեցող կազմակերպություններին,
 - շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում պահպանել անվտանգության և հակահրդեհային միջոցառումները /ապահովել կրակմարիչի առկայություն, տեղադրել հրշեջ հիդրանտ և հակահրդեհային ջրաքանակ/,
 - աշխատատեղերում հասանելի վայրում պետք է լինեն առաջին օգնության բժշկական արկղիկները և հակահրդեհային միջոցները,
 - աշխատակազմը պետք է ապահովված լինի խմելու ջրի և զուգարանների հասանելիության պայմաններով, ինչպես նաև սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններով,
 - պարբերաբար պետք է կարգաբերվեն շահագործման փուլում՝ ագրեգատների տեխնիկական վիճակը, իսկ անհրաժեշտության դեպքում իրականացնել վերանորոգում, վերազինում, կամ փոխարինում,
 - վառելիքը և քայուղերը, իսկ շահագործման փուլում տրանսֆորմատորային յուղը պահպանել այնպիսի պայմաններում՝ ապահովված բետոնյա կամ անջրանցիկ հատակով, ինչը կբացառի անձրևաջրերի հետ դրանց տարածումը շրջակա տարածքներ և ջրային ռեսուրսներ,
 - բարձր լարման տեղամասերում պետք է տեղադրվեն նախազգուշացնող վահանակներ,
 - իրականացնել հիդրոագրեգատների աղմուկի և թրթռման մակարդակների չափումներ,
 - շինարարական աշխատանքների իրականացման, ինչպես նաև ՓՀԷԿ-ի շահագործման փուլում ընդգրկել Շիրակամուտ համայնքի բնակիչներ, ինչը կնպաստի նրանց կենսամակարդակի բարձրացմանը,
 - Ընկերության կողմից մասնակցություն Շիրակամուտ համայնքում սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներին:
- Նախատեսվող բնապահպանական միջոցառումների իրականացման ծախսերը գնահատվել են 320.0 հազ.ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Շիրակամուտ համայնքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացավ հավանության: Քննարկումների ընթացքում բարձրացվեց հարց ոռոգման ջրանցքի մուտքամասում ձկնապաշտպան կառույցների առկայության և ոռոգման սեզոնին ՀԷԿ-ի աշխատանքի վերաբերյալ: «Լոռի» ԶՕԸ ընկերության ներկայացուցիչը հավաստեց ջրանցքի մուտքամասում ձկնապաշտպան կառույցի առկայության վերաբերյալ, իսկ «Լեռ և ջուր» ՍՊ ընկերության տնօրենը փաստեց, որ ոռոգման սեզոնին ՀԷԿ-ի աշխատանքը դադարեցվում է նաև պատրաստականությունը հայտնեց Շիրակամուտ համայնքի համար սոցիալական ծրագրերի շարունակական իրականացմանը:



Փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ Լոռու մարզպետարանը, առողջապահության նախարարությունը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց կարծիքները ևս հաշվի են առնվել:

Այսպիսով, ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները, կարելի է եզրահանգել, որ քանի որ ՓՀԷԿ-ի ջրառն իրականացվում է ոռոգման ջրանցքից, շահագործումը և վերազինման համար նախատեսվող աշխատանքները չեն առաջացնի լրացուցիչ բնապահպանական ծանրաբեռնվածություն Չանախչի գետի էկոհամակարգի և շրջակա տարածքների վրա: Հայտում նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա բացասական ազդեցությունները հնարավորինս կնվազեցվեն:

Փորձաքննական պահանջներ

1. ՀԷԿ-ի ջրօգտագործման պայմանների կատարումը հսկելու համար, անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ջրօգտագործման ծավալների հաշվառման, դրանց առցանց տեղափոխման և հասանելիության ապահովման միջոցառումները՝ ջրառի կետը ջրաչափական դիտակետով ու կապարակնքված ջրաչափով ապահովելու միջոցով (հիմք ընդունելով ՀՀ ջրային օրենսգրքի 32-րդ հոդվածի պահանջները):

2. «Չիչխան» փհէկի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել Ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված ջրաքանակները, ջրօգտագործման ռեժիմը և ժամանակահատվածը՝ չխոչնդոտելով համայնքի ոռոգումը:

3. Շահագործման փուլում առաջացող թափոնների (այդ թվում վտանգավոր թափոններ՝ տրանսֆորմատորային յուղ, բանեցված յուղեր, քսայուղեր և այլն) տեղադրումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համապատասխան համաձայնեցումների առկայության դեպքում:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Լեռ և ջուր» ՍՊ ընկերության կողմից ներկայացված «Չիչխան» փհէկի վերազինման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ  Մկրտչյան

Ընդամենը՝ 5 էջ

